Արձանագրություն N 3

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի նիստի

Ներկա էին՝

Խորհրդի անդամներ՝ Պավել Սաֆարյանը /նիստը վարող/, Կարեն Ոսկանյանը, Հայկ Ավագյանը, Արմեն Գևորգյանը, Կարեն Սահակյանը, Կարեն Միրզաբեկյանը, Մելրտա Հակոբյանը և Սարիան Այվազյանը:

Մասնակցում էին՝ Լևոն Խալիկյանը, Ալիս Երանոսյանը, Արարատ Սարգսյանը, Տարոն Հակոբյանը:

Քարտուղար՝ Արծրուն Նազարյան:

Օրակարգում՝

1. Տեսչական մարմնի 2017 թվականի գործունեության տարեկան ծրագրի հաստատման հարցը (զեկուցող՝ Լ. Խալիկյան),
2. Տեսչական մարմնի 2017 թվականի ստուգումների տարեկան ծրագրի փոփոխության հաստատման հարցը (զեկուցող՝ Լ. Խալիկյան),
3. Տեսչական մարմնի 2018-2020 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտի նախագծի հաստատման հարցը (զեկուցող՝ Լ. Խալիկյան),
4. Տեսչական մարմնի 2017 թվականի առաջին եռամսյակի կատարողականի գնահատման հաստատման հարցը (զեկուցող՝ Ա. Սարգսյան):

Օրակարգի հաստատման ժամանակ առաջարկություն կատարվեց օրակարգում կատարել փոփոխություն՝

ա/ Նկատի ունենալով, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվում են ֆինանսական չափաքանակներ, Պավել Սաֆարյանի կողմից առաջարկվեց օրակարգը 3-րդ հարցը հանել և այն քննարկել արտահերթ նիստով՝ համապատասխան չափաքանակների հաստատումից հետո, հրավիրելով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետ Դ. Բաղդասարյանին:

բ/ Պավել Սաֆարյանը լրացուցիչ տեղեկացրեց նաև խորհրդի անդամներին, որ Տեսչական մարմնի առաջին եռամսյակում չծախսված միջոցները խորհրդի համաձայնության դեպքում հնարավոր է ուղղվեն այլ նպատակների իրականացման համար:

Առաջարկվեց՝

1. Յուրաքանչյուր նիստ սկսել նախորդ նիստում տրված հանձնարարականների կատարման մասին հաղորդումը լսելուց հետո:

2. Հաջորդ նիստում ներկայացնել նավթամթերքի շարժական լաբորատորիայի ընթացիկ վիճակի վերաբերյալ տեղեկատվություն:
3. Հանձնարարել Տեսչական մարմնին քննարկել հեռահար (էլեկտրոնային) եղանակով Տեսչական մարմնի կառավարման խորհրդի նիստի իրականացման հնարավորությունը:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ.

Արտահայտվեցին՝ Պավել Սաֆարյանը, Կարեն Իսախանյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը, Կարեն Սահակյանը, Կարեն Միրզաբեկյանը և Մելիտա Հակոբյանը:

Առաջարկվեց՝ Ծրագիրը վերանայել ներառելով իրավիճակի վերլուծությունը, հիմնախնդիրների վերհանումը, թիրախների և դրանց հասնելու ուղիների բացահայտումը, ակնկալվող արդյունքների ներկայացումը:

Որոշվեց՝ Տեսչական մարմնի 2017 թվականի գործունեության տարեկան ծրագրի լրամշակման աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նպատակով հանձնարարել խորհրդի անդամներին եռօրյա ժամկետում Տեսչական մարմնին գրավոր ներկայացնել հստակ դիտողություններ և առաջարկություններ Տեսչական մարմնի 2017 թվականի գործունեության տարեկան ծրագրի վերաբերյալ: Հարցի քննարկումը տեղափոխել արտահերթ նիստ:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ.

Լ. Խալիկյանը նշեց հետևյալը.
2017 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Տեսչական մարմինը հնարավորություն չի ունեցել լիարժեք իրականացնել իրեն վերապահված գործառույթները (ստուգումները), քանի որ Տեսչական մարմնի գործունեության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը հստակեցված չէ: Բացակայել են համապատասխան ոլորտների թվով 27 ստուգաթերթերը, ինչպես նաև անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ և լրացումներ կատարել Տեսչական մարմնի գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտում՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքներում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում: Նշված օրենքների փաթեթը ՀՀ Ազգային ժողովի 2017 թվականի մարտի 2-ին ընդունվել են և ուժի մեջ կմտնեն 2017 թվականի ապրիլի 15-ին: Օրենքների ընդունումից հետո միայն Տեսչական մարմինը կարող է ներկայացնել կարգադրագրի ձևերը լիազոր մարմնի հաստատմանը:

Արտահայտվեցին՝ Պավել Սաֆարյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը, Կարեն Միրզաբեկյանը:

Որոշվեց՝ Հավանություն տալ Տեսչական մարմնի 2017 թվականի ստուգումների տարեկան ծրագրի առաջին եռամսյակում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտներին մնացած եռամսյակների վրա վերաբաշխելուն:
Կողմ – 8:
Դեմ – 0:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ (հանվել է).
Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ.

Արտահայտվեցին՝ Պավել Սաֆարյանը, Կարեն Իսախանյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը, Կարեն Միրզաբեկյանը, Մելիտա Հակոբյանը և Մարիամ Այվազյանը:

Որոշվեց՝ Հաստատել Տեսչական մարմնի 2017 թվականի առաջին եռամսյակի կատարողականի գնահատականը:
Կողմ – 6:
Դեմ – 2:

Խորհրդի անդամներ՝

Պավել Սաֆարյան

Կարեն Իսախանյան

Կողմ հանդիսացողներ եմ
հարցերի կապակցությամբ

Հայկ Այվազյան

Արմեն Գևորգյան

Կարեն Սահակյան

Կարեն Միրզաբեկյան

Մելիտա Հակոբյան

Աբգար Մկրտչյան

Մարիամ Այվազյան

Քարտուղար՝ Ա. Հարությունյան

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2017թ. ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

1. Ինչպես նախ անգամ նշվել էր ՀՀ տնտեսական զարգացման և նախարարության շուկայի վերահսկողության տեխնիկական մարմնի կառավարման խորհրդի՝ 2017թ. հունվարի 18-ին կայացած նիստի արձանագրության վերաբերյալ դատարկ կարծիքում ներկայացված արձանագրության տեքստում օգտագործված «արտահայտվեցին» ձևակերպումը հնարավորություն չի տալիս արտացոլել նիստի ընթացքում խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը: Անհրաժեշտ է մանրամասն ներկայացնել նիստի ընթացքում ներկայացված կարծիքները, դիտողությունները և առաջարկները: Անհրաժեշտ են համարում նաև առանձին նշել քվեարկության մասնակիցներում տարբերվող (Ոչ մի քվեարկած) դիրքորոշումները: Խնդրում ենք կառավարման խորհրդի հաջորդ նիստին ներդրադառնալ վերոնշյալ առաջարկներին:
2. Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ առաջարկություններդ աշխատանքային կարգով կներկայացվեն ըստ նիստին ձեռք բերված պայմանավորվածության:

Հայկ Այվազյան

18 ապրիլ 2017թ.